

Վահրամ Ռ. Սիմոնյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԸ ԵՎ ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ 1828–1829 ԹԹ. ՆԵՐԳԱՂԹԸ՝

Ադրբեջանառուսական պատմագեղարվեստական  
վարժանքների առարկա\*

**Բանալի բառեր**– Նիկիտա Միխալկով, ադրբեջանական  
գեղծարարություն, Թուրքմենչայի պայմանագիր, Ա. Գրիբո-  
յեդով, Հերակլ II, Պ. Ցիցիանով, վերաբնակեցում, ռուս կա-  
զակներ, Ներսես Աշտարակեցի, Ե. Լազարյան, Ներգաղթի  
կոմիտե, Ի. Պասկևիչ:

### Մուտք

Վերջերս հայտնի դարձավ, որ «Ադրբեջանի հանրապետության և Ռու-  
սաստանի Դաշնության միջև մշակութային կապերի զարգացման գործում  
հատուկ ծառայությունների համար» նախագահ Իլիամ Ալիևի կողմից  
«Դոստլուդ» («Բարեկամություն») շքանշանին արժանացած ռուս հայտնի  
կինոռեժիսոր **Նիկիտա Միխալկովը**<sup>1</sup> պատրաստվում է Ադրբեջանում 19  
մասանոց ֆիլմ նկարահանել ռուս գրող Ա. Գրիբոյեդովի վերաբերյալ՝  
հույս ունենալով դրա ֆինանսավորման գործում ներգրավել Բաքվի օլի-  
գարխներին<sup>2</sup>:

Ըստ ադրբեջանական աղբյուրների՝ իրենց մտավորականության մեծ  
մասն իբր բացասաբար է ընկալում Ա. Գրիբոյեդովի անվան հետ կապվող  
այն փաստը, ըստ որի՝ հենց վերջինս է ստորագրել Թուրքմենչայի պայմա-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.10.2016:

1 Տե՛ս Михалков получил азербайджанский орден Дружбы, <http://www.gazeta.ru/culture/news/2015/10/20/n7792343.html>.

2 Ըստ “Википедия – свободная энциклопедия”-ի տեղեկությունների՝ արվեստի վաստակավոր գործիչ Ն. Միխալկովը բազմաթիվ բիզնես ընկերությունների բաժնետեր ու փայտեր է ([https://ru.wikipedia.org/wiki/Михалков\\_Никита\\_Сергеевич](https://ru.wikipedia.org/wiki/Михалков_Никита_Сергеевич)): Պարզվում է նաև, որ գործարար ռեժիսորը միջոցների սղության պատճառով ֆիլմ նկարահանելու համար գումար է ակնկալում ադրբեջանական օլիգարխներից (տե՛ս Михалков в Баку ищет деньги у азербайджанских олигархов на новый фильм о Грибоедове, 07.12.2015, <http://bloknot.ru/kul-tura/mihalkov-v-baku-ishhet-den-gi-u-azerbajdzhanskih-oligarhov-na-novy-j-fil-m-o-griboedove-358497.html>):

ՎԼԿՄ համահայկական հանդես Ը (ԺԳ) Կարի, թիվ 4 (56), հոկտեմբեր–դեկտեմբեր, 2016

նագիրը, որով «Հարավային Ադրբեջանն» անցել է Իրանին<sup>3</sup>: Նման պնդումները զուգորդվում են Արևելյան Հայաստանի և Արցախի իբր՝ «Արևմտյան Ադրբեջան» հանդիսանալու մասին հայտնի ցնդաբանությունների հետ<sup>4</sup>:

Քննարկելով Ա. Գրիբոյեդովի վերաբերյալ համատեղ ֆիլմի աշխատանքների հնարավորության հարցերը՝ **Ն. Միխակովը հույս է հայտնել Ադրբեջանի նախագահին, որ կարդարացնի այդ պետության սպասելիքները**<sup>5</sup>: Գաղտնի չէ, որ ով վճարում է, նա էլ պատվիրում է:

Մեզանում այս ամենի արձագանքը հետևյալն է. «Նրա ֆիլմը հանրությանը պետք է համոզի, որ Արցախը ռուսներն են տվել հայերին, ուրեմն կարող են նաև ետ վերցնել...»<sup>6</sup>:

## 1. Ադրբեջանական պատմագրության մտավարժանքները «Գրիբոյեդով-պարսկահայերի ներգաղթ» թեմայով

Շրջանցելով անվանի թյուրքագետների հետազոտությունները<sup>7</sup> մերօրյա ադրբեջանական զեղծարարները համաշխարհային հասարակայնությանն ապակողմնորոշելու և հայության դեմ տրամադրելու միտումով փորձում են վերաձևել պատմությունը<sup>8</sup>: Իրենց էթնիկ պատկանելության հարցերում ցայսօր իրար բզկտող ադրբեջանական «գիտնականները»<sup>9</sup> նենգափոխում են հայ-Հայաստան-Արցախ անվանումների հետ կապված ամեն ինչ՝ թողարկելով մեկը մյուսին հակասող կամ իրարամերժ տեսակետներ: **Հիշյալ ձեռնածությունների կարևորագույն խնդիրն է՝ «ապացուցել», որ կովկասյան տարածաշրջանում հայերը եկվորներ են, որ**

3 Տե՛ս Михалков в Баку ищет деньги..., նշվ. հղված, համացանց:

4 Տե՛ս Ильхам Алиев выступил на сессии Парламентской Ассамблеи Совета Европы, 24.06.2014, <http://ru.prezident.az/articles/12149/images#.U611A2nRrUU.google>

5 **Никита Михалков**, Хочу надеяться, что сумею оправдать своим творчеством столь высокую награду азербайджанского государства, 20 окт. 2015, <http://vesti.az/news/268005>.

6 **Акоп Бадалян**, Михалков и Алиев отреагировали на письмо Зория Балаяна, <http://www.lragir.am/index/rus/0/country/view/44870>.

7 Տե՛ս **Երեմեն Գ.Ե.**, Թուրքերի ծագումը (Ծագումը և էթնիկական պատմության հիմնական էտապները), «Հայաստան», Եր., 1975, էջ 67-97; տես նաև՝ **Шнирельман В.А.**, Подделки и альтернативная история – в кн. “Фальсификация исторических источников и конструирование этнократических мифов”, М. 2011; նույնի՝ Ну, зачем же приписывать господствующие в Азербайджане взгляды “мировой науке”?, <http://www.regnum.ru/news/1624198.html>; նույնի՝ Албанский миф, <http://www.vehi.net/istoriya/armenia/albanskymif.html>

8 Տե՛ս **Фуад Ахундов**, Разрушители фальсификаций, <http://www.nofalsify.com/page/2.html>; Пришёл – Разрушил – Всех изгнал – Переиначил, <http://www.nofalsify.com/page/6.html>; տես նաև՝ **Ризван Гусейнов**, Большой Азербайджан в российских, европейских и иных источниках – ч. 7, Информационно-политический сборник, <http://www.rizvanhuseynov.com/2012/10/7.html>; **Атаев Т.**, Армянский буфер для империи Романовых, <http://www.islamnews.ru/news-138730.html>; նույնի՝ До “Геноцида” или документально-реальный взгляд на предисторию Карабахского конфликта, [http://www.echo.az/archive/2007\\_07/1601/](http://www.echo.az/archive/2007_07/1601/); **Ш. Гасанова**, В Туркманчае Персия и Россия делили независимые азербайджанские ханства, <http://www.echo.az/article.php?aid=35341>.

9 **Фарид Алекперли**, Парадигмы азербайджанского национального сознания, <http://www.kavkazoved.info/news/2011/09/23/paradigmu-azerbajdzhanskogo-nacionalnogo-soznania.html>; նույնի՝ Пolemика Фарида Алекперли-тюрка с Сулейманом Мурадалиевым-азербайджанцем, <http://www.atc.az/forum/showpost.php?p=283148&postcount=1096>, տես նաև՝ **Юсиф Джафаров**, Кто мы и откуда? О происхождении азербайджанского народа, <http://yusif-rauf.livejournal.com/7869.html>, Aug 31st 2009, **Джавид Ага**, Фальшивая историография Азербайджана, <http://janarmenian.ru/news/44222.html>, **Айдын Алекперов**, Этногенез азербайджанцев: уроки Играра Алиева, <http://atropat.narod.ru/istoriya/istoriya2.html>.

**Արցախը (Ղարաբաղը) զուտ ադրբեջանական տարածք է եղել և հայկականացվել է շնորհիվ Ռուսական կայսրության և ռուս գրող Ա. Գրիբոյեդովի ջանքերի՝ պարսկահայերի զանգվածային վերաբնակեցման շնորհիվ:**

Իրենց Ատրոպատոսի, Ջևանշիրի, Բաբեկի, միևնույն ժամանակ՝ Օդուզ Խաբանի, Շահ Իսմայիլի և Մահմուդ Ղազնևիի «թոռները» համարող<sup>10</sup> ադրբեջանցի «հետազոտողները» Թուրքմենչայի պայմանագրի XV հոդվածի կազմման գլխավոր մեղավոր են համարում Ա. Գրիբոյեդովին, որն իբր «գործիք էր դարձել հայ քաղաքական և հոգևոր գործիչներ Լազարյանների և արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու ձեռքին», ովքեր, ըստ նրանց, շարունակել են այն գործը, որը դեռ 1701 թ. սկսել էր «Մեծ Հայաստանի» գաղափարի հեղինակ Իսրայել Օրին<sup>11</sup>: Ադրբեջանցի հեղինակները գրում են, որ հակառակ Ի. Պասկևիչի՝ հայերին բռնի կերպով չվերաբնակեցնելու և կավածատիրականի փոխարեն պետական հողերում վերաբնակեցնելու վերաբերյալ հրահանգի՝ իբր խախտելով Թուրքմենչայի պայմանագիրը՝ հայերին վերաբնակեցրել են բռնությամբ<sup>12</sup>, և իբր թե՛ Ա. Գրիբոյեդովի նախաձեռնությամբ կազմակերպված հայերի ներգաղթի շնորհիվ են Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի «ադրբեջանական» նախկին խանությունները (իմա՝ «Արևմտյան Ադրբեջանը» – Վ.Ս.) հայկականացվել<sup>13</sup>:

Սակայն վերոհիշյալ «հետազոտողները» միտումնավոր շրջանցում կամ այլափոխում են պատմական այն փաստերը, ըստ որոնց՝ հիշյալ տարածաշրջանում հայերն ապրել ու արարել են դարեդար<sup>14</sup> և Պարսկաստան են բռնագաղթեցվել տարբեր ժամանակներում<sup>15</sup>: Շրջանցվում կամ անտեսվում են այն ժամանակվա ցարական պաշտոնյաների<sup>16</sup> և այլոց վկայությունները, որ մինչև իրանահայերի 1828–1829 թթ. ներգաղթը, նույնիսկ դարավոր բռնագաղթերից ու տեղահանություններից հետո հիշյալ խանություններում հայերն ունեցել են կարևոր թվաքանակ: Դրա մասին են վկայում նաև հայկական տեղանունների թյուրքացման ու վարչական փոփոխությունների մասին հիմնավոր վերլուծությունները<sup>17</sup>:

10 Джавид Ага, У нашей истории одна цель – “доказать”, что армян не существовало, и найти себе “албанские” корни, <http://www.panorama.am/ru/news/2012/12/12/javid-aga/624053>

11 Տե՛ս Ս. Գասանով, В Туркманчае Персия и Россия..., նշվ. հոդվածը, համացանց:

12 Տե՛ս Գուդ Ախունդ, Разрушители фальсификаций; նույնի՝ Пришёл – Разрушил..., նշվ. հոդվածները, համացանց:

13 Տե՛ս Գուդ Ախունդ, Российские источники раскрывают белые пятна в истории гибели А. Грибоедова, <http://erevangala500.com/news/16.html>, часть 1, 11.02.2012, часть 2, 19.02.2012, zerkalo.az; նույնի՝ В гибели Грибоедова повинно его армянское окружение, <http://news.day.az/politics/316216.html>, 17.02.2012, նույնի՝ Российская общественность должна знать истинные обстоятельства гибели Грибоедова, <http://news.day.az/politics/465750.html>, <http://interfax.az/view/599881>, 11.02.2014.

14 Տե՛ս Կոնյան Վ.Գ., Пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии, Ер. Институт истории, 2013, с. 23–112; տե՛ս նաև՝ Կոնյան Վ.Գ., Демографические перемещения и топонимия Восточной Армении в первой трети XIX века, «Բանբեր հայագիտության», ՀՀ ԳԱ, «Գիտություն» հրատ., 2015, N 3(9), էջ 188–211:

15 Տե՛ս Կոնյան Վ.Գ., Демографические перемещения и топонимия..., նշվ. հոդվածը, էջ 188–189:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 189:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 191–205:

## 2. Իրականում ովքեր են փոխել Արևելյան Հայաստանի էթնիկ դիմագիծը

Արևելյան Հայաստանի հայաթափման պատմությունը սկսվել է սելջուկ-թյուրքերի, մոնղոլների, Լենկ-Թեմուրի արշավանքների, ապա թուրք-պարսկական պատերազմների ժամանակներից, երբ հայության զգալի զանգվածներ բռնագաղթեցվել կամ վաճառվել են ստրկության կամ էլ ստիպված են եղել տարագրվել օտար ափեր: Միայն Շահ Աբասի արշավանքների ժամանակ Արևելյան Հայաստանից շուրջ 300 հազար հայեր են բռնագաղթեցվել Պարսկաստանի խորքերը: Փոխարենը տարբեր ժամանակներում Հայկական լեռնաշխարհ են թափանցել թյուրքական ու մահմեդական զանազան վաչկատուն հորդաներ, ինչի հետևանքով փոխվել է և ժողովրդագրական, և տեղանվանական պատկերը:

Հայտնի է ռուսական բանակի վրացի գեներալ Ցիցիանովի վկայությունն առ այն, որ 1795 թ. դրությամբ Ղարաբաղում (Արցախում) ապրել են 60.000 հայ ընտանիքներ, որոնց թիվը խստագույնս կրճատվել է 1797 թ. Աղա Մուհամեդ շահի ավերիչ արշավանքներից հետո՝ համաձարակների և զանգվածային արտագաղթի հետևանքով<sup>18</sup>: Ընտանիքների անդամների թիվը միջինը 5 անձերով հաշվելու դեպքում **դա կկազմեր շուրջ 300.000 մարդ: Պատմական ոչ մի վկայություն չկա, որ հիշյալ 60.000 հայ ընտանիքներին Արցախում վերաբնակեցրել են օտարներ:**

Հայերին բռնությամբ վերաբնակեցնելու քաղաքականությունը շարունակել են վարել նաև ռուսական իշխանությունները՝ Վրաստանը Ռուսաստանին միացնելուց հետո, երբ ռուս-պարսկական 1804–1813 թթ. պատերազմի առաջին փուլում գեներալ Ցիցիանովը մեծ թվով հայեր է վերաբնակեցրել Արևելյան Վրաստանում<sup>19</sup>:

Հետագայում կայսր Ալեքսանդր I-ը 1819 թ. հոկտեմբերի 22-ին հաստատել է «Արտասահմանից գաղթած վերաբնակեցվածներին Վրաստանում կալվածատերերի կողմից սեփական հողերում ընդունելու մասին» կանոնադրությունը<sup>20</sup>, որում, ի թիվս վերաբնակեցվածների և կալվածատերերի հարաբերություններին վերաբերող հոդվածների, առկա է 13-րդ հոդվածը, որտեղ նշված է. «Վրաստանի հետ սահմանակից երկրների հետ պատերազմի դեպքում վրաց կալվածատերերին թույլ է տրվում այդ երկրներից դուրս բերել և իրենց հողերում վերաբնակեցնել այդ երկրների հպատակներին նույն հիմունքներով, ինչ՝ կամավոր վերաբնակեցումների դեպքում»<sup>21</sup>: Հասկանալի է, որ սահմանակից ասելով՝ նկատի են առնված Օսմանյան Թուրքիան ու Ղաջարական Պարսկաստանը և դրանց հպատակության տակ գտնվող հայերը:

18 Տե՛ս Акты собранные Кавказскою Археологическою Коммисією (АКАК), Под ред. А.Д. Берже, т. II, 1868, док. 276.

19 Տե՛ս Павел Чобанян, Демографические перемещения и топонимия..., նշվ. հոդված, էջ 190:

20 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Գյուտ Աղանյանի արխիվ, ֆոնդ 332, ցուց. 1, գործ 497, թերթ 4-5 (ռուսերեն); տե՛ս նաև Полное собрание законов Российской империи (ПСЗРИ), Собрание первое, с 1649 года по 12 декабря 1825 года, Санкт Петербург, т. XXXVI (1819), 1830, док. 27.947, с. 557-558.

21 Տե՛ս նույն տեղում:

Այսպիսով, դարավոր բռնագաղթեցումների, ինչպես նաև Վրաստանում հայերի բռնի վերաբնակեցման հետևանքով Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Արցախ-Ղարաբաղում, հայ բնակչության թիվը կտրուկ նվազել էր մահմեդական ցեղերի բնակչության թվի համեմատությամբ, ինչը նաև զգալի անհարմարություններ էր պատճառել ռուսներին՝ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում: Ալեքսանդր I-ի վերոհիշյալ կանոնադրությունը կիրառում է գտնում նաև այս պատերազմից հետո՝ պարսկահայերի ներգաղթի և մահմեդական քոչվոր ցեղերին հպատակեցնելու ժամանակ: Այս հանրահայտ փաստերն են շրջանցում կամ խեղաթյուրում ադրբեջանական նորոյա ուսումնասիրողները:

### 3. Ա. Գրիբոյեդովի առնչությունները 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի կազմման գործընթացին

Ադրբեջանական զեղծարարները, հիմնվելով խորհրդային շրջանում ձևավորված կարծրատիպերի վրա<sup>22</sup>, Թուրքմենչայի պայմանագրի՝ իրենց համար չարաբաստիկ XV հոդվածի հեղինակ են համարում Ա. Գրիբոյեդովին: Փորձենք հասկանալ, թե որքանով է հիմնավոր նման պնդումը: 16 հոդվածներում ամփոփված գլխավոր պայմաններից և 9 հոդվածանոց հատուկ արձանագրությունից կազմված Թուրքմենչայի պայմանագրի<sup>23</sup> կնքման գործում Ա. Գրիբոյեդովի դերը «բացահայտող» հիշատակություն է անում իշխան Շչերբատովը՝ վկայակոչելով գլխավոր շտաբի պետ Ի. Դիբիչին հղած Կովկասյան կորպուսի հրամանատար Ի. Պասկևիչի մի զեկուցագիրը: Նրանում նշվում է, որ կայսերը հղած մի զեկույցում Ի. Պասկևիչը իբր երաշխավորել ու գովաբանել է Ա. Գրիբոյեդովին՝ մինչև ռազմատուգանքի մի մասի ստացումը պարսիկների հետ հաշտություն չկնքելու հորդորի համար<sup>24</sup>: Մինչդեռ դատելով Ի. Դիբիչին հղած վերոհիշյալ զեկուցագրի տեքստից<sup>25</sup>, ինչպես նաև Թուրքմենչայի պայմանագրի առիթով կայսր Նիկոլայ I-ին ուղղված Ի. Պասկևիչի շտրիավորական նամակից<sup>26</sup>, իսկ հաջորդ օրն էլ արտգործնախարար Կ. Նեսսելրոդեին ուղղված հաղորդագրությունից<sup>27</sup>, դրանցում բացակայում է ռազմատուգանքի առաջնահերթ պահանջի վերաբերյալ իշխան Շչերբատովի բերած վկայությունը, թեև երեք փաստաթղթերում էլ Ի. Պասկևիչը գովաբանում է Ա. Գրիբոյեդովին՝ որպես եռանդուն, տեղական գործերում փորձառու մարդու:

Վկայակոչելով նախքան Կարազիադինի բանակցությունները (1827 թ.

22 Տե՛ս Семёнов Л.С., К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении, ИФЖ, Ереван, 1959, с. 107-110; տե՛ս նաև՝ Попова О.И., Грибоедов дипломат, Москва, 1964, с. 102.  
23 Договоры России съ Востокомъ - Политические и торговые, "Персия", Собр. и издалъ Т. Юзефович, С.Петербургъ, 1869, с. 214-227.

24 Տե՛ս Шербагов, ген.-лейт., князь, Генерал-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность, С.Петербург, 1891, т. III, октябрь 1827-май 1831гг., с. 95.

25 Տե՛ս Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. II, 1814-1830, Изд-во Академии наук Арм. ССР, Ереван, 1978 (Присоединение), док. N 248.

26 Տե՛ս Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826-1828 гг., Сборник документов, Центр. гос. историч. архив Арм. ССР, "Вестник архивов Армении", Ереван, 1978, 2(51), док. N°151.

27 Տե՛ս АКАК, т. VII, 1878, док. 551.

հուլիս) Ա. Գրիբոյեդովի մի նամակը՝ ուղղված Պարսկաստանում ռուսական նախկին հավատարմատար Ս. Մազարովիչին, որում վերջինից նա խնդրում էր իրեն ուղարկել Գյուլիստանի պայմանագրի ֆրանսերեն կամ ռուսերեն տարբերակը<sup>28</sup>, խորհրդային շրջանում այն կարծիքն է հայտնվել, թե այդ տեքստը Ա. Գրիբոյեդովին հարկավոր էր՝ Պարսկաստանի հետ հաշտության պայմանագրի նախնական տեքստ կազմելու համար<sup>29</sup>: Սակայն հայտնի է, որ Կ. Նեսսելրոդեն նույն թվականի ապրիլին պետական պաշտոնյա Ա. Օբրեսկովի հետ Ի. Պասկևիչին արդեն ուղարկել էր Պետերբուրգում կազմված պայմանագրի նախնական տեքստը, որը տեղ էր հասել մայիսի վերջին: Այսինքն՝ եթե Ի. Պասկևիչը նախքան Կարազիադինի բանակցությունները հրամայել է կազմել նախնական պայմանագրի տեքստը, ապա նա պետք է, որ անպայման տրամադրած լիներ նաև արդեն տեղ հասած նախնական պայմանագրի կառավարական տարբերակը: Ուրեմն Կարազիադինում Ա. Գրիբոյեդովը հանդես է եկել ոչ թե Գյուլիստանի պայմանագրի հիման վրա իր «կազմած» նախնական պայմանագրի տեքստով, այլ կառավարության և Ի. Պասկևիչի ցուցումներով ու իր կողմից հնտորեն խմբագրված տարբերակով:

Ինչ վերաբերում է հայերին վերաբերող XII, XIV և հատկապես XV հոդվածներն իբր Ա. Գրիբոյեդովի կողմից Թուրքմենչայի պայմանագրում ներմուծվելու գաղափարին<sup>30</sup>, ապա դրա համար էլ հիմք են հանդիսացել գերիների փոխանակման և վերաբնակեցման վերաբերյալ Գյուլիստանի պայմանագրի VI հոդվածի հետ վերոնշյալ հոդվածների համեմատական վերլուծությունը<sup>31</sup>, ինչպես նաև Ի. Պասկևիչին Ա. Գրիբոյեդովի հղած հաղորդագրության մեջ այդ հոդվածների շուրջ վերջինիս կատարած մեկնաբանությունների ծանոթագրությունը<sup>32</sup>: Սակայն վերոհիշյալ պնդումները խիստ ենթադրական են. **այդ ծանոթագրության մեջ Ա. Գրիբոյեդովն ընդամենը մեկնաբանել է հոդվածները, որովհետև դա կապված էր որոշ մահմեդական անձանց՝ պայմանագրի հոդվածները ճիշտ չընկալելու և կրկին իրանահպատակություն ընդունելու ցանկության հետ, ինչը կասեցնելու համար Ա. Գրիբոյեդովը փորձել է Ի. Պասկևիչի միջոցով, հրամանի ձևով տեղեկատվություն հասցնել մաքսային և սահմանային պետերին**<sup>33</sup>: Ուստի Ա. Գրիբոյեդովի կողմից հոդվածների մեկնաբանումը բոլորովին էլ չի նշանակում, թե նա է եղել դրանց հեղինակը:

Նշենք, որ նախքան Դեհկարխանի բանակցությունները սկսելը, գնդապետ Եղիազար Լազարյանին ուղղված նամակում վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին գրել էր, որ ինքն **իրագեկել է Ի. Պասկևիչին Հայաստանի սահմաններն ընդարձակելու և պարսկահայերով ու տաճկահայերով բազմամարդ դարձնելու մասին: Նա նշել էր Սուրմալուի և Մակվի գավառների միացման, Ղազվինից, Համադանից, Թեհրանից,**

28 Տե՛ս Шостакович С.В. Дипломатическая деятельность А.С. Грибоедова, Москва, 1960, с. 100.

29 Տե՛ս Балаян Б.П. Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ереван, 1988, с. 180.

30 Տե՛ս Попова О.И. Грибоедов-дипломат, սշվ. աշխ., էջ 102:

31 Տե՛ս Балаян Б.П. Дипломатическая история..., սշվ. աշխ., էջ 182; տե՛ս նաև՝ Семлюков Л.С., Россия и международные отношения на Среднем Востоке в 20-х годах XIX в., Л., 1963, с. 124.

32 Տե՛ս АКАК, т. VII, док. 619:

33 Տե՛ս նույն տեղում:

**Սպահանից և այլ վայրերից հայերի վերաբնակեցման անհրաժեշտության մասին:** «... Մեծ բազմություն ունի հայոց բազմանալ այսր ի Հայաստան ի տերութեան օսմանցոց,- գրում է արքեպիսկոպոսը,- առ որ անանցանելի հարկավորութեամբ, հարկ է վասն սահմանաց Երևանու նշանակել ոչ զԵրասխ գետն, այլ զսեպհական սահմանն Երևանու, այսինքն է յայնկոյս Երասխայ յարևելից կողմանն անմատչելի ձորն Մակու անուանեալ, որ բաժանէ զԵրևանու սահմանն ի Խոյէ, զգագաթ լերինն Արարատայ և ընդ նմին կցեալ շղթայապատ լերանց՝ որք բաժանեն յԵրևանայ զսահմանն օսմանցոց իշխանութեան...»<sup>34</sup>:

Բայց արդեն Դեհկարխանի բնակցությունների ժամանակ, գաղտնի պահելու պայմանով, Ն. Աշտարակեցին Մակվի մահալի Սբ. Թադևոս առաքյալի վանքի վանահայր Բարսեղ եպիսկոպոսին և այլոց տեղեկացնում էր, որ ռուսական սահմանն Արաքսից այն կողմ չի անցնելու և պատվիրում էր հորդորել իրանահայերին, որ անցնեն Արաքսը և բնակություն հաստատեն Արարատյան դաշտում կամ Նախիջևանում՝ ընդմիշտ ազատվելով պարսից բռնակալությունից<sup>35</sup>:

Այն, որ աղբրեջանական կողմը պնդում է, թե հիշյալ գործիչների կողմից հայերի վերաբնակեցումն իրականացվել է բռնությամբ, հերքվում է նույն Բարսեղ եպիսկոպոսին արքեպիսկոպոս Ներսեսի՝ 1827 թ. դեկտեմբերի մեկ այլ նամակի փաստով, որում վերջինս հայտնում է Երնջակի և Նախավկայի վանահայրերին միմիայն ներգաղթի հորդորով Պարսկաստան առաքելու մասին<sup>36</sup>:

Իսկ Ներսես արքեպիսկոպոսին ուղղված Ի. Պասկևիչի պատասխան նամակն ապացուցում է, որ **դեռ 1827 թ. դեկտեմբերի 27-ին, վերջինիս ուղղած նամակով արքեպիսկոպոսը խնդրել էր Ռուսաստանին անցած տարածքներում, վերաբնակեցման նպատակով, պարսկական տիրույթներից հայերի գաղթ կազմակերպել և Իրանի կառավարությանն առաջարկել հայերի ունեցվածքը, անշարժ գույքը, այգիներն ու ջրաղացները վերցնել կառավարության տրամադրության տակ՝ դրանց տերերին տալով որոշ փոխհատուցում կամ էլ իրանցի մասնավոր անձանց հնարավորություն տալ հարմար գներով գնելու դրանք:** Ի. Պասկևիչը Ն. Աշտարակեցուն տեղեկացրել է, որ ապագա հաշտության պայմանագրում հատուկ կետ է մտցվել ներգաղթողների անշարժ գույքը 5 տարվա ընթացքում վաճառելու իրավունքի վերաբերյալ: Նա նշում է նաև, որ ներգաղթող հայերին ոչ մի նեղություն չէր պատճառվելու իրանական կողմից<sup>37</sup>: **Փաստացի հայտնի է, որ Թուրքմենչայի պայմանագրում հենց Ներսես Աշտարակեցու՝ ներգաղթողների ունեցվածքի վերաբերյալ վերոհիշյալ առաջարկներն են տեղ գտել:**

Անտեսված է նաև այն ուշագրավ փաստը, որ Ի. Պասկևիչն ինքը գրել էր ներքին գործերի նախարար կոմս Բլուդովին այն մասին, որ ռուսական

34 Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարան» (Մատենադարան), Ներսես Աշտարակեցու, արխիվ, թղթ. 166, վավ. 822 («Ի բերդն Երևանու», 06.10.1827թ.):

35 Տե՛ս նույն տեղում՝ թղթ. 166, վավ. 912; թղթ. 166, վավ 929:

36 Տե՛ս նույն տեղում՝ թղթ. 166, վավ. 931:

37 Տե՛ս AKAK, т. VII, док. 546:

մարզերում բնակվելու ցանկություն հայտնած որոշ հայերի իղձերին ընդառաջ գնալով՝ դեռ Դեհկարխանի բանակցություններում ինքը որոշել է դրավերաբերյալ անհրաժեշտ հանձնարարականներ տալ<sup>38</sup>: Ասվածն ապացուցում է, որ պարսկահայերի **ներգաղթի գաղափարն ու առաջարկն արվել էր հայ գործիչների և ոչ թե Ա. Գրիբոյեդովի կողմից**:

Անշուշտ, հետագոտողները չեն բացառել, որ Կարազիադիանում Ա. Գրիբոյեդովի «պատրաստած պայմանագրի նախնական տեքստում» հաշվի են առնվել նաև հայ գործիչների, մասնավորապես Ն. Աշտարակեցու “Записка об армянах для включения при переговорах о мире” և “О переселении армян из персидских владений в провинции, принадлежащие России” գրությունները, որի վերաբերյալ հղում է կատարվել «Արձանագրությունների» (АКАК) հ. VII-ի փաստ. 546-ին<sup>39</sup>: **Սակայն այդ վավերագիրը նախ թվագրված է 1828 թ. հունվարի 25-ով, երկրորդ՝ այն իրականում Ի. Պասկևիչի պատասխանն է Ներսես Աշտարակեցու 1827թ. դեկտեմբերի 27-ի՝ պարսկահայերի գաղթը դեպի ռուսական տիրույթներ թույլատրելու խնդրանքին և բոլորովին կապ չունի Կարազիադիանի բանակցությունների հետ, որոնք ավարտվել են 1827 թ. հուլիսի վերջերին**:

Մինչդեռ, անտեսելով հայ գործիչների ջանքերն ու առաջարկները, ինչպես նաև ժխտելով Ի. Պասկևիչի և Ա. Օբրեսկովի մասնակցությունը հայերին վերաբերող հողվածները պայմանագրում ներառելու հարցում՝ նշվել է հետևյալը. «... Դեռ մինչև պայմանագրի կնքումն Ա. Գրիբոյեդովի սերտ կապերը Հայաստանի հետ, նրա ամենաակտիվ մասնակցությունը Պարսկաստանի հետ հաշտության պայմանագրի մշակմանը, հնարավորություն են տալիս ենթադրել, որ հայ ժողովրդի շահերը պաշտպանող Թուրքմենչայի պայմանագրի հողվածները կազմված են հենց նրա կողմից»<sup>40</sup>:

Սա անապացույց ենթադրություն է, ինչը խորհրդային շրջանում դարձել էր կարծրատիպ, որովհետև փորձ էր արվում կապ ստեղծել այսպես ասած՝ առաջադեմ Ռուսաստանի և հայ ժողովրդի միջև: Այս հայտնի հորինվածքից էլ փորձում է կառչել նորօրյա ադրբեջանական պատմագրությունը:

Ամեն դեպքում կարևորում ենք այն հանգամանքը, որ դիվանագետ Ա. Գրիբոյեդովի ծառայությունն ընդգրկում է 1818-1829 թթ. (11 տարի), իսկ Հայաստանի ազատագրության համար դիվանագիտական պայքարն ու շփումները ծավալվել են՝ սկսած Պյոտր Մեծի և Եկատերինա II Մեծի ժամանակներից: Դրան հասնելու ուղիների, ակնկալվող օգուտների և շահերի վերաբերյալ հայկական հիմնավորումները վաղուց արդեն ներառվել էին Ռուսաստանի արտաքին քաղաքականության զինանոցի մեջ: Դրանք, ըստ ամենայնի, քննարկվել են ռուսական իշխանությունների կողմից<sup>41</sup>, և

38 Տե՛ս նույն տեղում, փաստ. 214:

39 Տե՛ս **Балаян Б. П.** Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ереван, 1988, с. 180.

40 Տե՛ս **Семлюв Л. С.** К вопросу о значении ..., նշվ. հոդված, էջ 107-108:

41 Տե՛ս **Սիմոնյան Վահրամ**, Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում Ա. Գրիբոյեդովի մասնակցության հարցը խորհրդային պատմագրության գնահատմամբ, ՊԲՀ, Եր., 2005, 3(170), էջ 103-110 (հոդվածի 4-րդ ծանոթության մեջ առկա է վրիպակ. պետք է լինի ոչ թե “Нессельроде-Паскевичу, 28 апреля 1827г.” АКАК, 1878, т. VII, с. 541, այլ նույն ժող., փաստ. 566, էջ 607 (“Гр. Нессельроде



տվյալ պատմափուլում հայերի նպատակները և ռուսական իշխանությունների շահերը պարզապես համընկել են:

Այն, որ պայմանագրի հողվածները Ա. Գրիբոյեդովի հեղինակածը չէին, հաստատվում է Ի. Պասկևիչին հղած Կ. Նեսսելրոդեի՝ 1828 թ. մարտի 16-ի գրությամբ, որում Թուրքմենշայի պայմանագիրը համեմատելով կառավարական հրահանգների հետ՝ վերջինս գրել է. «... Թուրքմենշայի տրակտատի հողվածները, այս հարցի կապակցությամբ, ես բարձրագույն հրահանգներին համապատասխան տրված և խստագույնս ճշտությամբ արված գտա»<sup>42</sup>:

#### 4. Պարսկահայերի ներգաղթի խնդիրը և Ա. Գրիբոյեդովի առնչություններն այդ գործընթացին

Դեռևս ռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմի ընթացքում «Պարսկաստանի հետ իրենց սահմանները հուսալիորեն պաշտպանելու, ասիական ցեղերին սանձելու, դավանանքով և ջանասիրությամբ իրենց ամենին էլ ոչ օտար հայերի հետ մերձենալու, ռուսական զորքերի մահացությունը պակասեցնելու, մալոռուսական աղքատ կազակների բարեկեցությունն ապահովելու, Մալոռուսիան ավելորդ ազգաբնակչությունից ազատելու» նպատակով 1827 թ. ապրիլի 27-ին ռուսական կառավարության կողմից հետևագործի գեներալ կոմս Տոլստոյի գլխավորությամբ կազմակերպվել էր հատուկ կոմիտե, որը 80.000 մալոռուս կազակների պետք է վերաբնակեցներ Այսրկովկասի նորանվաճ տարածքներում<sup>43</sup>: **Նաև սրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ մինչև նոյեմբերին սկսված Դեհկարխանի բանակցությունները, ռուս-պարսկական պայմանագրի նախնական տարբերակում նախատեսված չի եղել հայերի վերաբնակեցումն Արևելյան Հայաստանում:** Դա ապացուցվում է Ա. Օբրեսկովին ուղղված կոմս Նեսսելրոդեի՝ 1827 թ. ապրիլի 19-ի շրջաբերականով: Նրանում խոսվում է Իրանի հետ հաշտության և առևտրական պայմանագրերի նախագծերի մասին, որոնցում առաջ էին քաշված **միմիայն սահմանագծի և 40 մլն ռուբլի ռազմատուգանքի հարցերը**<sup>44</sup>:

Ռուս կազակների վերաբնակեցման ծրագիրը չիրականացավ, և ռուսական կառավարությունը գործողության մեջ դրեց պարսկահայերի ներգաղթ կազմակերպելու հայ գործիչների (Լազարյանների) առաջարկներն ու նախագծերը<sup>45</sup>՝ պարսկահայերի ներգաղթի կազմակերպման նպատակով ստեղծելով գերազանցապես հայ գործիչներից կազմված Ներգաղթի կոմիտե: Այն գլխավորել է Ի. Պասկևիչի կողմից Ռուսաստանից հրավիրված գնդապետ Եղիազար Լազարյանը: Այս գործի անուրանալի ջատագովներից է եղել հանդիսացած Ներսես Աշտարակեցին<sup>46</sup>, որի հայրենասիրությունը, Հայաս-

– Паскевичу, от 16-го марта 1828г., N 433, с. 607)):

42 АКАК, т. VII, док. 566.

43 Տե՛ս նույն տեղում, փաստ. 274:

44 Տե՛ս նույն տեղում, փաստ. 502:

45 Տե՛ս **Գիլոյան Վ.Ա.**, Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1989, էջ 296–298:

46 Տե՛ս **Լեո**, Երկերի լիակատար ժողովածու, չորրորդ հատոր, «Հայաստան» հրատ., Եր., 1984,

տանն ազատագրված ու կրկին հայերով բնակեցված, հայկական գորքերով էլ պաշտպանված տեսնելու բուռն տենչանքն ու գործունեությունը կասկածից դուրս են<sup>47</sup>: Հայերը ռուս-իրանական ու ռուս-թուրքական պատերազմների ժամանակ ռուսական բանակին ցուցաբերած բազմակողմանի, այդ թվում՝ զինական օգնությամբ ապացուցել էին իրենց միամիտ հավատարմությունը: Մահմեդական բնակչության ուխտադրժությանը ռուսները բազմիցս էին առնչվել<sup>48</sup>: Վրացիներն էլ միտված էին իրենց կորսված թագավորությունը վերականգնելու ակնկալիքներին<sup>49</sup>: Ուստի ռուսական իշխանությունները ճարպկորեն շահարկում էին հայոց անկեղծ նվիրվածությունն ու հավատարմությունը<sup>50</sup>: Հայերին սիրաշահելու վկայություն է Ի. Պասկևիչի՝ թարգմանությամբ պահպանված հետևյալ գրությունը. «...Ոչինչ երկմտիմ նմանապես թե երևելի միաբանություն հոգևորական անձանց էջմիածնի վանացո թախանձեալ յինչ յինչ օրինակաց այնքան բազմաթիւ ժողովրդականաց չունիցին զբարօրութիւն ընդ հեզ և իմաստուն կառավարութեամբ Մեծի Արքայիս մերոյ... Այլ ինձ այտորժելի է հավատացուցանել ձեզ... ինչք ձեր ի վանացո եղիցի անմերձենալի յաղագս իւրաքանչիւրոց»<sup>51</sup>:

Փաստ է, որ պարսկահայերին բռնությամբ չեն վերաբնակեցրել և Արևելյան Հայաստան ներգաղթելու գաղափարին իրանահայության մեծ մասն իրոք ցուցաբերել է դրական վերաբերմունք: Վկայված է նաև, որ եղել են տարակուսանքի, երկմտանքի, թերահավատության և անվստահության բազմաթիվ դեպքեր և հայ հոգևոր-հասարակական գործիչները ստիպված են եղել քարոզչական մեծ աշխատանք տանել իրանահայության շրջանում՝ բացատրելով ռուսական տիրապետության տակ անցնելու օգուտներն ու առավելությունները<sup>52</sup>: Բացի հարուցած խոչընդոտներից՝

էջ 399-404; 417-422; 434-439; տես նաև՝ **Саруханиян Норайр**. Персес Аштаракеци. “Литературная Армения”, N 6, июнь, Ереван, 1970, с. 71-74; Մատենադարան, Ներսես Աշտարակեցու, արխիվ, Ներսես Աշտարակեցու նամակները, թղթ. 164, վավ. 1024; վավ. 1326; թղթ. 167ա, վավ. 33; վավ. 90; վավ. 98; Արխիվ Լազարյանների, թղթ. 107, գործ 44, չիրապարակված վավ. 370:

47 Տես Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթապանակ 166, վավ. 932; վավ. 949; վավ. 1030; չիրապարակված վավ. 1061, 1071:

48 Հարկ է հիշել Ղարաբաղի Մեհտի-Ղուլի խանի փախուստի և հետո կրկին ռուսահպատակություն ընդունելու պատմությունը, 1826 թ. պատերազմի սկզբում իրանական գորքերի սկզբնական հաջողությունները կապված էին ռուսահպատակ մահմեդական խաների և բնակչության իրանամետ դիրքորոշման և զորակցության հետ; տես նաև ՀԱԱ, Հայկական մարզային վարչության արխիվ, ֆոնդ 90, ցուց. 1, գործ 18, թերթ 2; թերթ 17; 18; 25-26; 28-29:

49 Տես **Маркова О.П.**, Восстание в Кахетии в 1812г., Изд-во АН СССР, Москва, 1951, 332 с.; տես նաև ՀԱԱ, Լազարյանների արխիվ, ֆոնդ 42, ցուց. 1, գործ 17, չիրապարակված թերթ 3 (գնդապետ Հակոբ Դավթի Լազարյանը վկայում է 1812 թ. վրացիների կողմից Ռուսաստանի հանդեպ ուխտադրուժ դավաճանության մասին: Վրացիները շրջապատում են Թելավի ու Սղնախը: Ռուսական փոքրաթիվ կայազորը փակվում է միջնաբերդում, առանց հացի ու ջրի: Միայն հայերն են եղել, որ գիշերով սողալով՝ հասել են պարիսպներին և պարանով հաց ու ջուր են հասցրել ռուսներին: Կասկածելով հայերին, որ օգնություն են հասցնում ռուսներին՝ վրացիները դիտորդներ են կարգում: Հետագայում հավատարով վրացի իշխանների երդմանը՝ ռուս զինվորները, պաշտոնյաները և պարեան անձնատուր են լինում, հանձնում են միջնաբերդը, բայց ենթարկվում են բարբարոսական ծեծուցարդի: Նրանցից ոմանք փրկվում են միայն մեծահոգի և բարի հայերի տներում պատսպարվելով): Ի դեպ, Ա. Գրիբոեդովն իր «Ճանապարհորդական նոթեր»-ում, այս իրադարձության մասին գրելիս, ոչ մի խտրով չի հիշատակում հայերի օգնության մասին (**Грибоедов А.С.**, Сочинения в двух томах, т. 2, Библиотека “Огонёк”, Изд-во “Правда”, Москва, 1971, с. 121):

50 Տես ՀԱԱ, Գյուտ Աղանյանի արխիվ, ֆոնդ 332, ցուց. 1, գործ 489, թերթ 1-2:

51 Տես ՀԱԱ, Գյուտ Աղանյանի արխիվ, ֆոնդ 332, ցուց. 1, գործ 749, թերթ 1:

52 Տես Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, չիրապարակված վավերագրեր՝ թղթ. 166, վավ. 1082; վավ. 1084; վավ. 1083; վավ. 1086; տես նաև՝ **АКАК**, т. VII, док. 603, с. 632:

Պարսկաստանի իշխանություններն էլ իրենց հերթին են փորձել հայերի և նեստորականների շրջանում արտոնությունների և ազգային իղձերի իրականացման շուրջ հավաստիացումներ անել: Օրինակ՝ Էջմիածնից, Թիֆլիսից և Երևանից ստացված տեղեկությունների հիման վրա Լազարյանների կազմած մի զեկուցագրում նշվում է, որ ըստ Թավրիզում տարածված լուրերի՝ Երևանի սարդար Հուսեինը հայերին իբր խոստացել էր հայոց թագավորություն հիմնել՝ թագավոր օծելով վրաց թագաժառանգ Ալեքսանդրին<sup>53</sup>:

Հիմնականում Արևելյան Հայաստան են գաղթել չքավոր կամ միջակ ունեցվածքի տեր ընտանիքներ: Ներգաղթող պարսկահայերի քանակությունից և մեծ ծախսերից անակնկալի եկած՝ Ի. Պասկևիչը<sup>54</sup> դժգոհել էր Ե. Լազարյանի գործունեությունից, քանի որ վերջինս ներգաղթի կազմակերպման գործում իբր կարևորել և ի ցույց էր դրել իր տոհմի արժանիքների մասին հավաստիացումները և, **որ միմիայն իր տոհմի հանդեպ ունեցած մեծ հավատի ու վստահության հետևանքով էին հայերը գաղթել Այսրկովկաս:**

Այդ ամենը համարելով իր, ռուսական զենքի և պետության դերը «նսեմացնող հանգամանքներ»՝ Ի. Պասկևիչը հատուկ նամակներով<sup>55</sup> Ա. Գրիբոյեդովից, զեներալ Պանկրատևից, Ա. Ճավճավաձեից և իշխան Արղույթյան-Երկայնաբազուկից պահանջել էր իրեն ներկայացնել տեղեկություններ, թե իրո՞ք մեծ է եղել Ե. Լազարյանի տոհմի համարումը պարսկահայերի շրջանում և ինչպե՞ս է նա կազմակերպել այդ գործընթացը:

Նշված անձինք, և առաջին հերթին Ա. Գրիբոյեդովը, իրենց զեկուցագրերում բացառել են վերոնշյալ հանգամանքները՝ կարևորելով միմիայն ռուսական զենքի, պետության հովանավորության և Ի. Պասկևիչի արդար խոստումների հանգամանքները<sup>56</sup>: Ուշագրավ են ռուսական գաղութային քաղաքականությունն իրականացնողներից հատկապես Ա. Գրիբոյեդովի կարծիքները: Դրանք ներկայացված են “Записка о переселении Армянь изъ Персїи въ наши области” վավերագրում<sup>57</sup>, որում Ա. Գրիբոյեդովը քննադատում է Ե. Լազարյանի կազմակերպած ներգաղթը՝ կետ առ կետ նշելով «թերությունները»: Ներգաղթի գլխավոր ոգեշնչողն, ըստ նրա, պարսկահայերի վստահությունն էր Ռուսաստանի հանդեպ:

Ա. Գրիբոյեդովը Մ. Արղույթյանի հետ երկար քննարկել է նաև մահմեդականներին արվելիք այն ներշնչանքները, որոնց նպատակն է եղել համոզել վերջիններին, որ նրանց նեղությունները ժամանակավոր են և **հայերին կստիպեն հեռանալ մահմեդականներին պատկանող տարածքներից:** Անդրադառնալով ներգաղթյալներին՝ Ա. Գրիբոյեդովը համոզված պնդել էր, որ Ռուսաստանի համար պարսկահայ բնակչությունն առավել օգտակար է վրացահայերից և, ընդհանրապես, չարչիներից (торгаши),

53 Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թիթ. 106, գործ 51(17), վավ. 1; տե՛ս նաև՝ AKAK, Կ. VII, док. 586:

54 Տե՛ս AKAK, Կ. VII, док. 582 (1828 թ.):

55 Տե՛ս նույն տեղում՝ փաստ. 617; տե՛ս նաև՝ Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 381-395:

56 Տե՛ս AKAK՝ փաստ. 623; փաստ. 625; փաստ. 626; փաստ. 627:

57 Տե՛ս նույն տեղում, փաստ. 618:

որոնք գանձարանին ոչ մի օգուտ չեն բերել, իսկ Պարսկաստանից գաղթածներն արհեստավորներ ու հողամշակներ էին<sup>58</sup>:

Ա. Գրիբոյեդովը գրել էր Ի. Պասկևիչին, որ Նախիջևանում թաթարների շրջանում մեծ հուզումներ են սկսվել ներգաղթյալ հայերի պատճառով<sup>59</sup>: Նա ներկայացրել էր իր կողմից կազմած մի աղյուսակ, որում Նախիջևանի «մարզի» և քաղաքի տարածքում նախկին 404 հայ և 2024 մահմեդական ընտանիքների առկայության պայմաններում, ցույց էր տվել ընտանիքների հարաբերակցության փոխվելը 1328 հայ ընտանիքների ներգաղթի հետևանքով, որի արդյունքում հայ ընտանիքների թիվը մահմեդական 2024-ի դիմաց հասել էր 1732-ի: **Ա. Գրիբոյեդովը վերոնշյալ «անհամաձայնությունը» վեր էր համարել ամեն տեսակի դատողությունից և մահմեդականներին հանգստացնելու համար առաջարկել էր շտապ կերպով 500 հայ ընտանիք փոխափել և 15-20 ընտանիքներով վերաբնակեցնել Դարալագյազում (Վայք):** Ըստ նրա՝ 200 ընտանիք արդեն ցանկացել էին տեղափոխվել, մնացածների կեսին, նրա համոզմամբ, կարելի կլիներ համոզել, իսկ մնացած առավել համառներին՝ հարկադրել գաղթել: Ա. Գրիբոյեդովի պնդմամբ՝ ավելի քիչ անհարմարություն կլիներ 100 կամ 150 հայ ընտանիքների, քան ողջ մարզի թաթարների բողոքների դեպքում, **հակառակ պարագայում ռուսական իշխանությունները կարող էին թաթարներին դրդել ավստսալու և կարոտով հիշելու պարսկական կառավարումը:** Այս առնչությամբ Ա. Գրիբոյեդովը մտավախություն էր հայտնել, որ մահմեդական ցեղերը կանցնեն Պարսկաստան և արտասահմանյան թերթերը կսկսեն գրել ոչ ռուսների օգտին:

Ա. Գրիբոյեդովը Ի. Պասկևիչին համոզել էր, որ 500 հայ ընտանիքների դուրս բերումը մեծ բարեգործություն կհամարվի թաթարների համար: Դրանից բացի՝ Ա. Գրիբոյեդովն առաջարկել էր ռուսների կողմն անցած մահմեդական ցեղերին վերցնել ծառայության, ռոճիկ վճարել և չէր հապաղել ավելացնել, որ խաներից ու բեկերից խլված իշխանության փոխարեն իրենք նրանց տվել են օտար (ռուսական - Վ.Ս.) օրենքների խճճվածություն:

Թաթարների կրած նեղությունների պատճառով ստացած բազմաթիվ բողոքներից «խեղդված»՝ Ա. Գրիբոյեդովը «բռնել է Նազար-Ալի խանի և Շիհ-Ալի Բեկի կողմը և նրանց համոզել է, որ օգտագործելով իրենց հեղինակությունը՝ ժողովրդին ներշնչեն հավատարիմ ծառայել ռուսական կառավարությանը»: Ըստ նրա՝ մահմեդական ցեղերին կարելի կլիներ «խելքի բերել»՝ նրանց տոհմական պետերի և հոգևորականների միջոցով, նաև վերջիններիս և դազիների դատաստանական գործերին չխառնվելով: Նա նույնիսկ խորհուրդ էր տվել տարեկան 800 թուման նպաստ վճարել Նազար-Ալի խանին այն գումարից, որն իր կողմն անցած խաներին, իրենց մարզերի մահմեդական գործիչներին խոստացել էին ռուսները: Ըստ նրա՝ պարսկական անհնազանդ տիրույթներում դա կարող էր բարձրացնել ռուսական իշխանությունների վարկը<sup>60</sup>:

58 Տե՛ս նույն տեղում:

59 **Չոբանյան Պ.Ա.**, Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Էջմիածին, 2006, էջ 18:

60 Տե՛ս AKAK, т. VII, док. 623 (Ա. Գրիբոյեդովի 1828 թ. հոկտեմբերի 1-ի զեկուցագիրն Ի. Պասկևիչին):

Մինչխորհրդային պատմագիտության մեջ, բացի վերոհիշյալ փաստաթղթերի հիշատակումից<sup>61</sup>, Ա. Գրիբոյեդովի անունը հայերի ներգաղթի հետ այլ կերպ չի կապվել և նրան չեն վերագրվել Լազարյանների և Ներգաղթի կոմիտեի հետ մշտապես կապված լինելու<sup>62</sup>, ներգաղթը կազմակերպելու «Հրահանգների» կազմման<sup>63</sup>, հայ ժողովրդի հավատարիմ պաշտպանը լինելու, իրանաթուրքական լծից հայերին ազատագրելու գաղափարի հեղինակը լինելու և իր շնորհիվ պարսկահայերի ներգաղթի առաքելությունն իրականացվելու<sup>64</sup>, բազմաչարչար հայ ժողովրդի վիճակի ու ճակատագրի հանդեպ կարեկից լինելու, նրա պատմության և մշակույթի խորագիտակ լինելու հանգամանքները<sup>65</sup>:

Ինչպես տեսնում ենք, Ի. Պասկևիչի վրա հայ գործիչների կողմից «փափուկ ճնշում» գործադրելու վերաբերյալ ադրբեջանական զեղծարարությունները նույնպես հիմնազուրկ են. **ճարպիկ ու խարդավասեր Ի. Պասկևիչը ռուսական գաղութային քաղաքականությունն իրականացնող «չինովիկ» էր, որին, ինչպես նաև Ա. Գրիբոյեդովին, հետաքրքրել են իրենց ու ռուսական պետության շահերը և ոչ թե հայ ժողովրդի վիճակն ու ճակատագիրը:**

## 5. Ա. Գրիբոյեդով–հայեր հարաբերությունների խնդիրը

Վերևում նշվեց, թե ինչ վերաբերմունք է դրսևորել Ա. Գրիբոյեդովը հայ գործիչների նկատմամբ: Ուստի ադրբեջանական նորոթյա պնդումները, թե իբր հայերը մոլորեցրել են Ա. Գրիբոյեդովին և ամուր օղակի մեջ առնելով՝ «իրենց ձեռքին գործիք են դարձրել»<sup>66</sup>, ցանկալին իրականության տեղ հրամցնելու անապացույց ենթադրություններ են: Փաստերը լրիվ հակառակ իրականության մասին են վկայում:

Սկսենք նրանից, թե ինչ գործունեություն է ծավալել նա Պարսկաստանում՝ կապված ներգաղթողների թողած ունեցվածքի հետ: Վկայված է, որ բացի պարսկահայերից, մեծ թվով խաներ և մահմեդական ժողովուրդ են գաղթել ռուսական տիրապետության տակ անցած հայկական տարածքներ: Այսպես. 1828 թ. դեկտեմբերի 3–ին Թավրիզից Վ. Միկլաշևիչին հղած նամակում Ա. Գրիբոյեդովը պատմում էր ներգաղթյալների՝ Պարսկաստանում թողած գույքի «հսկողության» մասին<sup>67</sup>: Սակայն այդ նամակում նախ՝ **չի նշվում, թե կոնկրետ ինչ ազգության կամ դավանանքի ներգաղթյալների մասին է խոսքը**, ապա, եթե հաշվի առնենք այն հանգամանքը,

61 Берже Ад. Александръ Сергеевичъ Грибоедовъ. Деятельность его как дипломата, 1827-1829, “Русская старина”, Санкт-Петербургъ, 1874, томъ XI, с. 746-750 (մինչխորհրդային հայ հեղինակներ Մ. Ավալերդյանցը, Ա. Երիցյանը, Լեոն և այլք ևս հայերի ներգաղթի գործում չեն հիշատակում Ա. Գրիբոյեդովի անունը):

62 Տե՛ս Գրիգորյան Զ. Տ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Հայաստանի պետ. հրատ., Եր., 1960, էջ 393-400:

63 Տե՛ս Пашуто В. Т. Дипломатическая деятельность А.С. Грибоедова, “Наука”, М., 1947, с. 140-143.

64 Տե՛ս Պարսամյան Վ. Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1947, էջ 116:

65 Տե՛ս Попова О. И. Грибоедов дипломат, նշվ. աշխ., էջ 135-136:

66 Տե՛ս Гасанова Ш. В Туркменчае Персия и Россия делили..., նշվ. հոդված, համացանց:

67 Տե՛ս Грибоедов А. С. Сочинения в двух томах, “Правда”, т. 2, Москва, 1971, с. 318-319.

որ նա իր «չթույլատրված» ամուսնության պատճառով արդեն ուշացրել էր մեկնումը Թեիրան և շտապելով այնտեղ, կնոջը՝ Նինո Ճավճավաձեին, թողել էր Թավրիզում, իսկ Թեիրանում էլ մնացել էր ընդամենը 3 շաբաթ, ապա ինչ «հսկիչի» պարտականությունների մասին կարող էր լինել խոսքը, երբ նա **պարզապես այդ պարտականությունները և ժամանակը չի ունեցել**: Նրան հանձնարարված կամ նրա կողմից «հսկիչի» **աշխատանք տանելու վերաբերյալ ոչ մի փաստ գոյություն չունի**։ Թավրիզում նա **ավելի շատ զբաղված է եղել մահմեդական հարեմներում քրիստոնյա կանանց հայտնաբերելու, հարցաքննելու, որոշ պարսիկների ծեծի ենթարկելու, իր անգուսպ և դրամաշորթ աշխատակիցների պատճառած տհաճությունների խնդիրներով**<sup>68</sup>:

Մեր կարծիքով՝ վերոհիշյալ նամակում Ա. Գրիբոյեդովը պարզապես փորձել է իր նամակների ուշացումները բացատրել բազմազբաղ լինելու հանգամանքով: Ասվածը հաստատվում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության՝ Ասիական գործերի դեպարտամենտի ղեկավար Կ. Ռոդոֆինիկինին դարձյալ Թավրիզից գրած նամակով<sup>69</sup>, որտեղ նշված է, որ իրենց կողմն անցած խաներն ու ժողովուրդը 5 տարի օգտվելու էին իրենց նախկին եկամուտներից և կարող էին իրենց ունեցվածքը վաճառել (հմմտ. Ի. Պասկևիչին Ներսես Աշտարակեցու կողմից դեռ 1827 թ. դեկտեմբերի 27-ի նամակում արված առաջարկների հետ):

Դարձյալ նկարագրելով «հսկիչի» իր ծանր աշխատանքը՝ իշխանություններից նա թույլտվություն և լիազորություններ էր խնդրել՝ իր անունով գնելու գաղթողների կավածքների «ղաբալաները» (առք ու վաճառքի պայմանագրերը), որպեսզի պարսկական իշխանությունները հասկանան, որ դրանք կորցնում են ընդմիջտ և թույլատրեն իրենց հպատակներին գնելու դրանք<sup>70</sup>:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ նամակներում խոսքը բացառապես մահմեդական խաների ու ժողովրդի ներգաղթի և ունեցվածքի մասին է և ոչ մի փաստ չի ներկայացվում, թե կոնկրետ ինչ ջանքեր են գործադրվել պարսկահայերի ներգաղթի և նրանց ունեցվածքի ձակատագրի շուրջ:

Ընդհանրապես՝ հայերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի բացասական վերաբերմունքի մասին վկայում են նրա նամակները: “Сын отечества” հանդեսի խմբագրին ուղղված նամակում ռուսական իշխանություններին վարկաբեկող կեղծ լուրեր տարածելու գործում նա անհիմն և անապացույց կերպով մեղադրել է իրենց առևտրից դժգոհ հայերին, որոնց միջոցով իբր չափազանցված ձևով այդ լուրերը կարող էին տեղ գտնել տարբեր արտասահմանյան ամսագրերում<sup>71</sup>:

Ղազանչիից Ս. Մազարովիչին գրած նամակով Ա. Գրիբոյեդովը պատմել էր, որ քարավանի հետ գնացող մի հայի միջոցով ինքը ցանկացել է նամակ ուղարկել դեպի ռուսական ուղեկալ, բայց վերջինս որպես վարձ պահանջել է 50 հորթ (〰): Այս «չափից դուրս մեծ պահանջից» դրդված և

68 Տե՛ս **Грибоедов**. Его жизнь и гибель в мемуарах современников, Ред-я Зин. Давидова, “Красная газета”, Ленинград, 1929, “Реляция происшествий...”; с. 151-184; էջ 152-153; էջ 157; էջ 158:

69 Տե՛ս **Грибоедов А.С.** Сочинения, т. 2, նշվ. աշխ., էջ 325-326:

70 Տե՛ս նույն տեղում:

71 Տե՛ս նույն տեղում՝ էջ 56 (1819 թ. հունվարի 21-ի՝ Ա. Գրիբոյեդովի նամակը):

տվյալ հայի հավատարմության նկատմամբ երաշխիք չունենալով (""), նա վրնդել է այդ մարդուն: Նրա խոսքերն են. «Ի՛նչ ստոր ծնունդ (վիժվածք) են այդ հայերը. նրանցից ոչ մեկն ինձ ձանաչել չէր ուզում և միևնույն ժամանակ ականջիս միշտ շշնջում են, որ մենք նրանց ապագա հովանավորներն ենք: Լավ հովանավորյալներ են: Նրանք մեզ ծախում են այն նույն պարսիկներին, որոնք պատրաստ են նրանց մասնատել և եփել ցանկացած խյուսի (coyc) տակ...»<sup>72</sup>:

## Եզրակացություններ

Վերոշարադրյալը թույլ է տալիս ներկայացնել հետևյալը.

Հայանպաստ հողվածները Թուրքմենչայի պայմանագրում ներառվել են Դեհկարխանի բանակցությունների (1827 թ. նոյեմբեր – 1828 թ. հունվար) ժամանակ, երբ բանակցությունները կառավարական հրահանգներով վարում էին Ա. Օբրեսկովն ու Ի. Պասկևիչը և ոչ թե Ա. Գրիբոյեդովը: **Ուստի Թուրքմենչայի պայմանագրում XIV, XV հողվածները ներառելու ջանքերը որոշ խորհրդային հետազոտողների և ադրբեջանական նորոյազեղծարարների կողմից բացառապես Ա. Գրիբոյեդովին վերագրելն արդարացված չէ.** առավել իրատեսական է հարցը դիտարկել որպես ռուսական իշխանությունների գաղութային քաղաքականության նպատակներից բխող հրահանգների, հայ հոգևոր և գինվորական գործիչների առաջարկների ու ջանքերի և **Ա. Գրիբոյեդովի կողմից հողվածները գրագետ խմբագրելու արդյունք:**

Բարձր գնահատելով հայերի ներգաղթի նշանակությունն Արևելյան Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի փոփոխության և պատմական հայրենիքում ազգահավաքման գործում՝ հարկ է ընդգծել դրանում հատկապես Ներսես Աշտարակեցու և Ե. Լազարյանի անուրանալի դերը: Ռուս-պարսկական պատերազմից հետո հայրենանվեր այս գործիչներին Այսրկովկասից հեռացնելը Ռուսաստանի գաղութային քաղաքականության շարունակությունն էր: Ե. Լազարյանի գործունեության ընթացքում՝ այդպիսի չափերով առաջին անգամ իրականացված ներգաղթի կազմակերպման ժամանակ չէին կարող վրիպումներ չլինել: **Թերությունների համար նրան մեղադրողները, այդ թվում՝ Ա. Գրիբոյեդովը, անտեսել են ռուսական կառավարության և Հայկական մարզային վարչության՝ գործից անտեղյակությունն ու դրան անպատրաստ լինելու հանգամանքները:**

Այսրկովկասից Ե. Լազարյանին հեռացնելու իրական պատճառը նրա հայանպաստ գործունեությունն էր և **սեփական դերը կարևորելու նպատակ ունեցող Ի. Պասկևիչի հերթական խարդավանքները**<sup>73</sup>: Ներսես

72 Տե՛ս Грибоедов А.С. Сочинения, т. 2, նշվ. աշխ., էջ 198 (1819 թ. սեպտեմբերի 11-13-ին գրած նամակը):  
73 Տե՛ս Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը... նշվ. աշխ., էջ 355-370; Տե՛ս Шербагов, նշվ. աշխ., էջ 320-321 (իշխան Շչերբատովը նշում է, որ Ի. Պասկևիչը հայերի միջից արմատախիլ է արել այն թեթևամիտ ենթադրությունը, թե իբր ցարիզմը, ոտնահարելով մահմեդականների շահերը, ցանկանում է վերածնել հայ ժողովրդին և հոգ տանել գերազանցապես հայերի մասին: Ի. Պասկևիչը Ներսես Աշտարակեցուն հանել է այդ մոլորություններից: Ըստ Շչերբատովի՝ Ի. Պասկևիչը լայն քաղաքական հայացքների ու մահմեդական բարձր առաքինությունների տեք հոգևորականությանը և

**Աշտարակեցու նման՝ Ե. Լազարյանն էլ է նպատակ ունեցել Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանություններում, թեկուզ մասնավոր տիրոյթներում, վերաբնակեցնել այդ տարածքներից իրանական իշխանությունների կողմից ոչ վաղ անցյալում տեղահանված բնիկ տերերին՝ հայերին:**

Ռուսական իշխանությունների և նրանց նպատակները իրականացնողներից նաև՝ Ա. Գրիբոյեդովի համար կարևոր է եղել Այսրկովկասում թույլ չտալ հայերի դերի զգալի մեծացումը և հնարավորինս համամասնություն պահպանել հայ և մահմեդական բնակչության հարաբերակցության առումով, քանի որ **ռուսների համար կարևոր էր Այսրկովկասում ունենալ հավատարիմ հպատակ, բայց միմյանց հանդեպ թշնամաբար տրամադրված խառը բնակչություն, որպեսզի որևէ կողմի բացարձակ գերակշռության դեպքում ազգային հնարավոր ձգտումներ, պահանջներ և ազատագրական ելույթներ չծագեն:**

Ա. Գրիբոյեդովը Ի. Պասկևիչի հանձնարարությամբ կատարել է Ներգաղթի կոմիտեի գործունեությունը վերատուգողի (ռևիզորի) ու «վերլուծողի» և ոչ թե ներգաղթը կազմակերպողի և իրականացնողի դերը, քանզի, չլինելով տվյալ կոմիտեի և ոչ էլ Հայկական մարզային վարչության անդամ, նա ժամանակային առումով էլ չէր կարող ակտիվորեն մասնակից լինել հայերի ներգաղթի գործընթացին: Լինելով պետական պաշտոնյա և ելնելով պետական շահերից՝ նրա գործունեությունը տվյալ հարցում սահմանափակվում էր ռուսական կառավարության գաղութային քաղաքականությանը նպաստող առաջարկներով, ըստ որոնց՝ ներգաղթողների սոցիալ-տնտեսական վիճակը շարունակելու էր մնալ նույնը և վերաբնակեցված քրիստոնյա հայերը շարունակելու էին մահմեդական բնակչության հետ առնչվել շարիաթի օրենքներով<sup>74</sup>:

**Փաստեր չկան, որոնք կվկայեն, թե կոնկրետ ինչ գործողությունների շրջանակներում է արտահայտվել հայ ներգաղթյալների՝ Պարսկաստանում մնացած ունեցվածքի և եկամուտների պահպանման ու ստացման վերահսկողությունը Ա. Գրիբոյեդովի կողմից:**

Ներկայացնելով հայ ժողովրդի հանդեպ Ա. Գրիբոյեդովի ունեցած վերաբերմունքի շուրջ գերադրական տեսակետներ՝ խորհրդային շրջանի գաղափարական կապանքներով կաշկանդված ուսումնասիրողները շրջանցել են հայերին տրված բացասական և հաճախ՝ արգահատալից գնահատականներ պարունակող նրա գրառումները: Իրանում նախկին գերեվարվածների կամ գաղթեցվածների շահերի պաշտպանությամբ Ա. Գրիբոյեդովի հանդես գալու հանգամանքների մասին հիշատակությունները հիմնականում վերաբերում են միայն մահմեդական հարեմ-

հանտկապես Թավրիզից Ռուսաստան գաղթած մուջթեհիդ Աղա-Միր Ֆաթթահին հակադրում էր վերոհիշյալ առաքիություններից գուրկ հայ հոգևորականությանն ու Ներսես Աշտարակեցուն):

74 Стн АКАК, к. VII, ф. 1, л. 623, էջ 647-649 (1828 թ. հոկտեմբերի 1-ի՝ Ա. Գրիբոյեդովի հաղորդագրություն Ի. Պասկևիչին, որում ասվում է. «Боймся-ли мы пристрастия мусульманских судий? - но власть ихъ единственно основана на выборъ и доверіи народомъ... А где одинъ изъ тяжущихся христианинъ, то по мухаммеданскому шаро (духовный законъ), допускается до 6-ти свидетелей обоихъ вероисповеданій. Можно-бы ещё въ такомъ случае наряжать депутата отъ правительства» (էջ 648)):



ներում պահվող հայ, վրացի և գերմանուհի կանանց հայտնաբերման (հարենային դիվանագիտություն) և հետ վերադարձնելու իրողություններին<sup>75</sup>: Ասվածը թույլ է տալիս պնդելու, որ խորհրդային շրջանում գերագնահատվել են Ա. Գրիբոյեդովի առնչությունները պարսկահայերի ներգաղթի գործին. նա այդ գործընթացին չի ունեցել բովանդակային մասնակցություն:

Դատելով պատմագիտական առումով հիմնագուրկ ադրբեջանական պատմախեղումները էկրանացնելու՝ ռուս կինոռեժիսոր Ն. Միխալկովի պատրաստականությունից՝ Ա. Գրիբոյեդովի մասին սպասվող ֆիլմը լինելու է հերթական հակահայկական քաղաքական պատվերը, որը չի ընդունվելու պատմական իրականությանը քաջածանոթ գիտական հանրության կողմից, որովհետև դրա հիմքում դրվող՝ Ա. Գրիբոյեդովի առնչությունները պարսկահայերի ներգաղթի գործին, անհիմն են և մտացածին:

**Վահրամ Ռ. Սիմոնյան** – Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են XIX դարի I երեսնամյակի հայ-ռուսական հարաբերությունների և այդ համատեքստում՝ ռուս գրող Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի ձևավորման, դիվանագիտական գործունեության, տնտեսագիտական հարցերի սկստմամբ նրա հետաքրքրությունների և կովկասյան տարածաշրջանի նվաճված ժողովուրդների հանդեպ դրսևորած վերաբերմունքի ու նշվածների շուրջ տարբեր փուլերում ձևավորված պատմագիտական մտքի ուսումնասիրությունը:

## Summary

### ALEXANDER GRIBOYEDOV AND THE IMMIGRATION OF PERSIAN ARMENIANS IN 1828–1829

As a subject of Azeri and Russian historical–fictional workouts

Vahram R. Simonyan

**Keywords** – Nikita Mikhalkov, Azerbaijani falsifications, Turkmanchai agreement, A. Griboyedov, Heraclius II, P. Tsitsianov, relocation, Russian Cossacks, Nerses Ashtaraketsi, E. Lazaryan, Immigration Committee, I. Paskevich.

The article examines the policy of the Russian government, regarding the relocation of Persian Armenians due to Turkmenchay agreement and the involvement of the Russian writer Alexander Griboyedov. The author shows that the relocation of the Persian Armenians is their return to their historic homeland

75 Տե՛ս **Շերմագանեան Գալուստ**, Նիւթեր ազգային պատմութեան համար, Երևելի Հայկագու՛նք ի Պարկաստան, Ռուստով (Դոնի վերայ), 1890, ՌՅԼԹ, էջ 77–103; տե՛ս նաև՝ **Ա.Ս. Գրիբոեդով. Երջիւնը և յիբելը** մեմուրաք սոբրեմեննիկոք, Րեդ. և թրեմեչ. **Յու. Դաւիճովա**, Լենինգրադ, “Կրասնայա ցազետա”, 1929, “Реляция происшествий предваривших и сопровождавших убийство членов последнего российского посольства в Персии”, с. 166–174.

from which they were deported during the reign of Shah Abbas in the early 17th century.

During the Russian-Persian war of 1826-1828, after the failure of the policy of resettlement of 80,000 Little-Russian Cossacks, the Russian government accepts the proposals of the Armenian figures (Lazarevs) and organizes the resettlement of the Persian Armenians.

We've presented the efforts and huge practical and advocacy contribution in this process of Georgian Armenians eparch - Nerses Ashtaraketsi, colonel E. Lazaryan, M. Argutyanyan-Dolgorukiy and others. The efforts of the above-mentioned figures have not received a proper assessment by the commander of the Caucasian Corps I. Paskevich, because of the machinations of which Alexander Griboyedov was among the officials carrying out thorough inspection of E. Lazaryan, the head of the Committee for the resettlement of the Persian Armenians.

As it is well-known, in the Soviet historiography in the research process of Persian Armenians' migration a great importance was attached to the role of Alexander Griboyedov. But historical facts show that A. Griboyedov was only the executor of the will of central government and had little sympathy for the Armenians. Meanwhile Soviet mythmaking made Griboyedov the savior of long-suffering people. Modern Azerbaijani historiography, which is based on the ridiculous concept of Armenians «being newcomers» in Eastern Armenia, seeks to use Soviet mythmaking about Griboyedov-armenophile for their own purposes. Another manifestation of it is the attempt to win over to his side the famous Russian director N. Mikhalkov and remove the serial film about Griboyedov. The aim of this venture is the justification of the invented concept of «Western Azerbaijan», whose demographic face was contorted by the resettlement of Armenians from Persia and the Ottoman Empire.

Резюме

## **АЛЕКСАНДР ГРИБОЕДОВ И ИММИГРАЦИЯ ПЕРСИДСКИХ АРМЯН В 1828–1829**

Как предмет азербайджано–российских  
историко–художественных упражнений

Ваграм Р. Симонян

**Ключевые слова** – Никита Михалков, азербайджанские подлоги, Туркменчайский договор, А. Грибоедов, Ираклий II, П. Цицианов, переселение, русские казаки, Нерсес Аштаракети, Е. Лазарян, Иммиграционный комитет, И. Паскевич.

В статье исследуется политика российского правительства, относительно переселения персидских армян по Туркменчайскому договору и причастность к этому русского писателя А. Грибоедова. Автор показывает, что

переселение персидских армян являлось их возвращением на историческую родину, из которой они были депортированы во время правления шаха Аббас в начале 17-го века.

В период русско-персидской войны 1826-1828 гг., после провала политики переселения в Восточную Армению 80.000 малорусских казаков, российское правительство даёт ход предложениям армянских деятелей (Лазаревых) и становится организатором переселения персидских армян. Представлены усилия и огромный практический и пропагандистский вклад в этом процессе епарха грузинских армян Нерсеса Аштаракеци, полковника Е. Лазаряна, М. Аргутяна-Долгорукого и других. Усилия вышеуказанных деятелей не получили должной оценки и отношения со стороны командующего кавказским корпусом И. Паскевича, из-за козней которого в числе чиновников, осуществляющих тщательную проверку деятельности руководителя Комитета по переселению персидских армян Е. Лазаряна, был А. Грибоедов.

Как известно, в советской историографии в процессе организации переселения персидских армян большое значение придавалось роли А. Грибоедова. Но исторические факты показывают, что А. Грибоедов был лишь исполнителем воли центральных властей и не испытывал особой симпатии к армянам. Между тем советское мифотворчество сделало из А. Грибоедова образ спасителя многострадального народа. Современная азербайджанская историография, которая базируется на смехотворной концепции “пришлости” армян на территории Восточной Армении, стремится использовать мифотворчество о Грибоедове-арменофиле в своих целях. Очередное его проявление — попытка переманить в свою сторону известного русского кинорежисёра Н. Михалкова и снять многосерийный фильм о Грибоедове. Цель данной затеи — обоснование выдуманной концепции “Западного Азербайджана”, демографическое лицо которого будто было искажено переселением армян из Персии и Османской империи.

ՀԻՇՆՂՈՒԹՅՈՒՆ

ՀԻՇՆՂՈՒԹՅՈՒՆ, 2016  
հոկտեմբեր-դեկտեմբեր, 4 (56), 4-րդ դաս (4-րդ)

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԾՈՒՆԵՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ